

ՄՇԱԿ

Հարկան դինը 10 բուրլ, կէս տարւանը 6 բուրլ:
Աւանդին համարները 7 կողմերով:
Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):
Ծայրագրութիւնը ընդունւում է ամէն լեզուով:
Ծայրագրութիւնների համար վճարում են
խրատանկար բառին 2 կողմերով:

ՆԵՐԿԱՅ 1889 ԹԻԻՆ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, Նոյն դիրքով և Նոյն պարագրամայով: Մենք ստանում ենք սեփական ՀԵՌԱԳՐԱԿԱՆ:
(ՄՇԱԿԻ) տարեկան դինը 10 բուրլ է, վեց ամսականը 6 բուրլ է:
Գրվել «ՄՇԱԿԻ» կարելի է ՌԱՐԱԳՐԱՍՏԱՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների անկյունում Թաւմաշեւի տանը):
Կայտարարութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻ» գրվելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԻՈՐ ԱՐՄԵՐՈՐԻ

ԲՈՎԱՆԳԱՎՈՐՈՒԹԻՒՆ

Կրեդիտային հաստատութիւնների առթիւ.—
ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կաթնատնտեսութիւնը
Նոր-Բայազետի գաւառում. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տեղեկութիւններ Թիւրքաց-Հայաստանից. Խալիլայի բանտների շարժումը և Կրիստի. Արտաքին լուրեր.—ԽԱՐԻՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳՐԱԿԱՆ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Սալոմէ Նորատունկեան.

ԿՐԵՐԻՏԱՑԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Մինչև «Մշակի» երեւոյթը ռուսահայոց մասնաւոր կատարելապէս անտես էր առնուած. կրեդիտային որ և է հաստատութիւնների ժողովրդի մէջ հիմնելու հարցը: «Մշակի» երեւոյթը մի տարի առաջ, երբ Թիֆլիսում խոսուած էին արդէն «Փոխադարձ կրեդիտի ընկերութեան» հաստատման անհրաժեշտութեան մասին, «Մշակի» խմբագրի ստորագրութեամբ հրատարակվեց «Փոխադարձ կրեդիտի ընկերութիւնը» վերնագրով մի փոքրիկ հայերէն բրոշյուր, որի մէջ խոսվում էր այդ տեսակի կրեդիտային հաստատութեան անհրաժեշտութեան մասին, բացատրվում էր նրա կազմակերպութիւնը և այն միայն էր յայտնվում:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԱԼՈՄԷ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

Ես մայր եմ... սրտով և հոգով կապվեցի երեւոյթին հետ, և ամբողջ ուշքով միտքս նրա բարօրութեան վրա էր: Մինչև նրա աշխարհ գալը սրտին մէջ դատարկ տեղ կար: Այժմ սիրտս լի էր. հաշտվել էի ամբողջ աշխարհի հետ: Ոչ ոքի հետ հաշտ չունէի: Երեւոյթն էր իմ բաղձը ու փառքը: Սրա փոքրիկ ձեռները համարեցի ու սիրտս թնթեցի: Ուրախութիւն էր դառնում, սրա սիրտից պատկերի վրա երջանկութիւն էր ինձ համար կարգում, կապում աչքերի միջից անբաւ հրճանքներ էի քաղում... Ամբողջ աշխարհը կառնա կերպարանափոխվել էր և ասեղի չէր ինձ համար: Նոյն իսկ այդ երեւոյթն եղաւ պատճառ, որ ես մի անգամ ես փորձ փորձեցի միասին կենալ: Պետք էր վախճանվել հետ: Ահա թէ ինչպէս պատահեց այդ:
Հիւանդութիւնս անցել էր. երեւոյթն պիտի կենդանի: Կենդանի նախընթաց օրը մայրս Սալոմէի հետ ինձ մօտ էին: Մօլլա Սիմօն էլ եկաւ: Տէր-Մօսէսի հետ Այդ տէրտէրի գալը ինքն ըստ

ինքեան արդէն պարզ ազդարարութիւն էր, ըր սրանք, մէկը մէկի խօսք տալով ինձ մօտ գալու համար, մտքներում մի նշանաւոր խորհուրդ ունէին: Ամեն հանգամանքները ցոյց էին տալիս, որ սրանք մտադիր էին բուն պաշարման ենթարկել ինձ: Ես պատրաստ սպասում էի: Բայց նախ և առաջ մի քանի խօսք այդ քանաւայի մասին:
Տէր-Մօսէսը մեր եկեղեցու աւագ քահանայն էր: Սա ինչպէս ասում են երկու երեսանց, մարդ էր: Նրա այդպիսի բնաւորութեան համար փարիսեցի տէր-Աղուէս, կամ աւելի սուղ, տէր-Թիւրքլի անունը կը տային: Նրա յատկութիւններն այսպէս էին մեկնում. Հէտ օր, ասեղի, երկու թշնամիներին բարիչացնի, էգօց երկու բարեկամների մէջ խօսք խառնի, մէկին միւսի միտք ուտացնի, արիւնը խմացնի—էր փարիսեցի տէր-Թիւրքլի հիւնարն ա... Մի օճ օճ տէր-Թիւրքլին չի—սիրտը սատանայ՝ հագուստը քահանայ... Ամենի գոռը նրա համար բաց ա. ըստեղ կը նստի՝ կը փափայ սրա նրա ականջում, ըստեղ կը խօսի՝ կը ըստ ըստի: Ըստեղից ըստեղ, ըստեղից ըստեղ կը տալիս ինչ կը ընդի—մին էլ տեսար մարդ մարդից ընդի: Կաւ, աղբերը աղբորից կարկնց: մէջ տեղը լաւա մարդին ինքը մնաց: Համա արի տես ըի՛ իր լեզուի համար, ինչպէս ամենը վախճում են... Մի գոռմանը չընդի նրա լեզուի տակ: Են էլ պիտի ասած, որ նրան սիրում են էլ. որովհետեւ շատ քաղցր կը խօսի. մեծի հետ մեծ ա, փոքրի հետ փոքր, ազգաւորի հետ ազգաւոր, գողի հետ...

Համար, տպագրելով մեր լրագրի էջերում հայերէն լեզուով թարգմանված փոխառութիւնների ընկերութիւնների՝ կառավարութիւնից հաստատված նօրմալ, օրինակի կանոնադրութիւնը: Այդ կանոնադրութիւնը տպւեց արդէն «Մշակի» 1873 թվականի հարցում: Մեր թէ ընդհանուր յօդուածներում և զը, մեր երկրի այլ և այլ տեղերում, թէ բազմաթիւ գաւառական թղթակցութիւնների մէջ մենք մեր լրագրի գոյութեան 16 տարեկան ընթացքում անդադար ուշադրութիւն էինք դարձնում այն տխուր իրողութեան վրա, որ մեր գիւղացին, երբ որ ընթացիկ տնտեսական պէտքերի համար փողի կարիք ունի, նա իր ձեռքի տակ չունենալով ոչ մի կրեդիտային հաստատութիւն, ստիպված է գնել գիւղի վաճառականներին, ահաբեկ տոկոսով փող վերցնելով և խրվելով անխելի պարտքերի մէջ:
Մենք անդադար մասնագոյց էինք առնում այն տխուր երեւոյթի վրա, որ էժան, մատչելի, կարճ-ժամանակեայ կրեդիտի բացակայութեան պատճառով մեր թէ գիւղական և թէ քաղաքային մանր արդիւնաբերողի դրութիւնը անտանելի է: Այդ արդիւնաբերողի հետ մենք կապում էինք և խոր փնտրելի հետ մենք կապում էինք և մեր ամբողջ մէջ նշմարելի կորստաբեր հակումը դէպի անընդհատ գաղթականութիւնը և պանդխտութիւնը:
«Մշակը» իր գոյութեան ամբողջ ընթացքում, զրկել է առաջին տարվանից բազմաթիւ միջոց այս վերջին օրերս, միշտ մատնացոյց էր անում այն անմիջապէս իրականացրած ազդեցականութեան մեծ մասը հողի պակասութեան ունի: Իր ներքին ընթացիկ զուրա զարւո համար մեր հողագործ ժողովուրդը իր առջև միայն երկու ելք ունի. կամ բաւականապէս իր եղած հողերի քանակութեամբ, նա պէտք է փոխի հողի մշակութեան ձևը և ուրիշ անհրաժեշտ բերք արդիւնաբերել, քան թէ մինչև այժմ էր արդիւնաբերում, կամ նա պէտք է գնէ նոր հողեր: Մենք մինչև անգամ մասնագոյց էինք անում այդ տեսակի մի քանի դէպքերի վրա. օրինակ հայ-կաթօնիկների Նահապար գիւղի համայնքը (և ոչ թէ մասնաւոր անձինք գիւղացիներից) քանի մի տարի սրանից առաջ գնել էր

Բեզակ կալուածատիրոջ ժառանգներից բաւական ընդարձակ հողերը, միացնելով այդ հողերը գիւղի համայնական հողերի հետ: Դա մի բացառիկ երեւոյթ էր մեր շինական համայնքների կենտրոնում: Այդ տեսակի բացառական դէպքերը ընդհանուր երեւոյթ դարձնելու համար՝ երկրագործ ժողովուրդը, մեր երկրի այլ և այլ տեղերում, պէտք է մի կողմից միջոց ունենար օգտվելու երկար-ժամանակեայ կրեդիտից, իսկ մի կողմից, նոր հողեր առնելու ժամանակ չը պէտք է հանդիպէր այն արգելքին, որը ծագում է մեր երկրի մասնաւոր հողերի մեծ մասի չը չափած, նրանց սահմանները չը որոշած լինելուց:
Թողնելով մի այլ անգամի երկար-ժամանակեայ կրեդիտի վրա խօսելը, որի իրագործումը մեր երկրում յարուցված է այժմ կառավարութեան նախաձեռնութեամբ, վերջացնելը այդտեղ մեր խօսքը կարճ-ժամանակեայ կրեդիտի մասին, ասելով որ այդ կրեդիտային ձևի մասին տարիների ընթացքում «Մշակի» յարուցած և արծարծված խնդիրը կէջ մինչև այժմ չէ իրագործված թէ մեր երկրի քաղաքային արհեստագործ-արդիւնաբերող դասակարգի մէջ, և թէ շինական, հողագործ-արդիւնաբերող դասակարգի մէջ—գրանում մեղաւոր չէ «Մշակը», որը մեր ամբողջ մամուլից առաջինը և միակն էր այդ հարցի յարուցանողը ու արծարծողը, այլ դրանում մեղաւոր է ինքն հայ հասարակութիւնը:
Ամբողջ, մեզանում, լրագրը չէ կարողում, այլ նրան կարողում է փոքրաթիւ թէ քաղաքային և թէ գիւղական ինտելիգենցիան: Ինչքան ուզում էք յարուցեք հարցեր մամուլի մէջ, բայց եթէ ամբողջ չունի իր շրջանում զեկավարող անհատներ, որոնք յարուցած հարցերը ըմբռնելուց յետոյ, շնային առաջնորդել ամբողջ, նախաձեռնութեան յանձն առնելի մամուլի յարուցված հարցերը կենտրոն մէջ իրականացնելու,—ձեր բոլոր գրածները կը մնան մեռած առաւելում...
Միայն յանդուգն, մեծամիտ, ինքնահասան դատարկութեանը, կարող են մեղաւորել մամուլը, որ այս կամ այն հարցը չի արագործվեց ժողովրդի մէջ, կարող են այն աստիճան անբարեխղճ և ստախոս

—Այո, ճշմարիտ է ասում մեծ քոյրս. քո թագն ու պսակն է... Աղաչում ենք քեզ, պատական Սալոմէ, որ մեզ բոցադալան պատասխան չը տաս այս գործի մասին: Սուրբ Աւետարանը,—ամենքը բարեպաշտութեամբ խաչալիքեցին երեսները,—սովորեցնում է մեզ արդար կեանքի ճանապարհները և մենք չը պէտք է չեղվենք նրա սուրբ վարդապետութիւններից, այլ պարտական ենք միշտ գնալ նրա ճանապարհներով: Կան կենտրոն մէջ այնպիսի հանգամանքներ, որոնց վրա չը խօսէ սուրբ գիրքը. ամեն բան այն տեղ նախատեսված է և վճռած... Մեզ մնում է միայն կատարել և անտես չառնել նրա տնօրէնութիւնները, եթէ ուզում ենք նրա դրախտին արժանանալ...
—Այո մեզ, վայ մեզ, մերը ընդ մերը ընդհանուր էր տէրտէրի խօսքը Սալոմէ: Մայրս լալիս էր: Միմօնը աչքերը միշտ յառած ունէր տան անկիւնին:
—Բայց կամենում եմ,—սկսեց վկայութիւններով խօսել տէր-Մօսէսը.—որ դուք գիտե՞նաք, ասում է Պողոս առաքեալը առ Կորնթացիս, թէ ամեն մարդու գիտելիս Գրիստոսն է, և կնկան գիտելը մարդը, և Բրիստոսն է մարդը կնկան համար ստեղծվեցաւ, այլ կնկնը մարդու համար... Նոյն առաքեալը սովորեցնում է փրկւապնդներին. կամայք հնազանդեցեք ձեր մարդկանցը:

լինել՝ ուրիշները տարիներով դործածը անտես առնելու և ուրանալու համար, կարող են մի կողմից այն աստիճան ծոյլ և անբարեխիղճ լինել ուրիշների դործունէութիւնը չուսումնասիրելու, միւս կողմից այն աստիճան տխմար լինել՝ երեւակայելու համար որ մինչդեռ նախորդների տարիներով արծարծվածը չիրագործվեց, իրանց մի հատիկ յօղուածը այն հետեւանքը կունենայ, որ անմիջապէս այն ամենը կիրագործվի, ինչ որ տարիների ընթացքում ընդունակ չեղաւ իրագործել անշարժ, ամեն նորութեան թշնամի, ամեն բարեբաղիքի մի տեսակ անգիտակցական ատելութեամբ փախչող ամբիոնը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՌԱՏՆԵՍՏՈՒԹԻՒՆԸ ՆՈՐ-ԲԱՅԱՋԷՏԻ ԳԱՒԱՌՈՒՄ

Մի քանի տարի է ինչ կովկասի համարեա թէ բոլոր քաղաքներից դանդաղեցնել են լուսւոյ, որ վաճառականութիւնը ընկած է, առետուր չը կայ, պարտքերը կանոնաւոր չեն վճարուում և շատ այսպիսի բաներ: Վերջին ուսումնական տարեկանը սկսելից շատանալ ու բազմանալ առետուր անողների թիւը, ամեն դը աշխատում է ձեռք բերել մի գումար ապրանք գնելու համար, մի երկու այնքան էլ ապագայի է վերցնում, վարձում է մի խանութ և ամեն բան պատրաստ է, լրանում է պայմանագրով, գալիս է պարտք վճարելու ժամանակը, — փող չը կայ, վաճառականը մոտեցնում է և ստիպված է լինում ստոր միջոցների դիմել, և այն թէ այս պատճառով է և թէ ուրիշ, մեր նպատակից դուրս է այստեղ քննել, բայց՝ այսքան կասեցը, որ քանի դնում է առետուրը ընկնում է, մանաւանդ փողը քաղաքներում, իսկ արհեստները և զրկաւորապէս երկրի արդիւնաբերութեան վրա մտածող չը կայ: Այս տողերը մեզ դրեցը գրելու հետեւալ հանգամանքը:

Մի քանի տարի սրանից առաջ Նոր-Բայազէտի հասարակութիւնը խնդիր էր ներկայացրել, որ որ հարկն է, տեղիս քաղաքային ուսումնարանում աստղագործութեան (СТОЛЯРНИЙ) արհեստ մոցնելու մասին, բայց թէ անտառի բացակայութեան և թէ ուրիշ հանգամանքների պատճառով կառավարութիւնը երեսի վրա էր թողել այդ հարցը, չը նայելով որ քաղաքը բոլոր կարեւոր ծախսերը իր վրա էր ընդունել: Այժմ փոխանակ աստղագործութեան լինելու է պանիր և իւղ պատրաստելու օրինական գործարան (ОБРАЗЦОВАЯ СЫРОВАРНЯ): Այդպէս յունվարին հասարակական ժողով է կայացել և համախօսեալն վճիռ են կազմել քաղաքապետական գումարից 600 ռուբլի յատկացնել հարկաւոր գործիքներ գնելու համար և 5 տարի շարունակ տարեկան 700 ռ. նշանա-

կել պանրագործ-վարպետի ուժիկ, տան վարձ և այլ մանրածախսի համար: Այս բանի ինքնիշխանութիւնը պատկանում է քաղաքային ուսումնարանի տեսուչ պ. Նիկոլայ Ֆէօֆորովին, որը ոչ մի ջանք չէ խնայում գործը առաջ մղելու: Պ. Ֆէօֆորով մի անգամ Նրեան է գնացել և գործը նահանգապետի մօտ վերջնաւոր, այժմ թիֆլիսում կառավարչապետի գիւնատանն է գտնուում: Նիկոլայ մայիս պատասխան չը ստացելի, պ. Ֆէօֆորով մտադիր է գալ թիֆլիս և անձամբ խնդրել գործին ընթացք տալու համար: Այդ ժամանակ նա վարձելու է պանրագործ-վարպետին եկող գարնանից նոր և կատարելագործված երանակով պանրագործութիւնը և իւրի պատրաստելը սկսելու: Թէ որքան օգտակար է և արդիւնաբեր մշակված կաթնամթերքութիւնը Նոր-Բայազէտում և իր գաւառում, դրա համար այստեղ առաջ ենք բերում նոյն իսկ պ. Ֆէօֆորովի կազմած նախագծից հետեւալը: «Նոր-Բայազէտի գաւառը ունի 563,602 դէսիատին տարածութիւն, որից մօտ 160,000 թաղաւորական է (жителей) և ներկայացնում է շատ զեղեցիկ արօտատեղ-մարգագետին: Այդ տեղերում ամառը, մայիս ամսից սկսած՝ դուրս են գալիս եայլաղ (Кочевья) իրանց սուրճներով Նրեանի նահանգի, թիֆլիսի և Գանձակի նահանգների մի մասի ընկալիչները և մնում են մինչև սեպտեմբերի վերջը: Նրեանի նահանգից գալիս են հետեւալ գաւառները՝ Ընա-կիչները՝ Նոր-Բայազէտի, Նրեանի, Շարուր-Գարալագետի և Սուրմալուի: Թիֆլիսի նահանգից՝ Սնանի գաւառի միւսիայն էլ դուրս կուլանան: Գանձակի նահանգից՝ Ղազախի գաւառի շիխիւ-ցիք ու սալաղիցիք, և Շուշու գաւառից կարմիր, կիւրուս և Ղազախլարցիք: Մարգագետինները գտնուում են Սև ծովի մակերևոյթից 6,340-ից մինչև 12,000 ոտնաչափ բարձրութեան վրա և իրանց յատկութիւններով շատ զանազան են և դրա համար թաղաւորական մարգագետիններով օգտ-վելու վճարը ամեն տեղ մէկ չէ և չորս կարգի է բաժանված: Առաջին կարգը վճարում է իւրաքանչիւր դեպիտոյին համար 30 կօպ., երկրորդը՝ 20 կօպէկ, երրորդը՝ 12 կօպէկ, և չորրորդը՝ 8 կօպ: Մինչև 1883 թիւը գոյութիւն ունէր «սաբալաղ» անուանված հարկը, այսինքն նախըզ դուրս գնացողները վճարում էին խոշոր անասունին ամեն մէկի համար 10 կօպ., իսկ մանր անասունին 1 կօպ: Բայց այսպիսի սխա-տեմը անյարմար գտնվելով, եայլաղ դուրս եկող-ների խաբեբայութեան պատճառով, փոխվեց դե-սիատինային սխառնով: Վերջին սխառնը այժմ տալիս է գանձարանին տարեկան 21,560 ռուբ-լի, որից 9,186 ռ. վճարում է Նոր-Բայազէտի գաւառը, 7,380 ռուբլի՝ Նրեանին, 2,015 ռ. Շարուր-Գարալագետին և միւս 2,989 ռ. վճա-րում են մնացածները:

Առաջ բերած թաւաշանները եւ վերցրել եմ Նոր-Բայազէտի գաւառի արհեստական կալուած-ների աղէտից, դրա համար էլ անպայման այդ թաւաշանները պէտք է ուղիղ համարել: Գրանից

երևում է, որ ամենից շատ վճարում է Նոր-Բա-յազէտի գաւառը, հետեւալը և այդ գաւառը հարուստ է միւս գաւառներից եղլիւրաւոր անա-սուններով: Հաստատապէս, Նոր-Բայազէտի գա-ւառում մանր անասունների թիւը հասնում է մօտ 300,000-ի, իսկ խոշորինը մօտ 80,000, որից տարեկան մօտ 10,000-ը վաճառվում է թիֆլի-սում մարգործներին: Գաւառի բնակիչները պա-րագլու են բացառապէս հողագործութեամբ և անասնապահութեամբ: Թիֆլիսը զրկաւորապէս Նոր-Բայազէտիցն է ստանում եղլիւրաւոր անա-սունը և իւղը: Տարեկան 800—1000 պուղ-իւղ է արտահանվում թիֆլիս և Նրեան, չը նայե-լով որ մեր իւղը առանց խառնուրդի է, այն ինչ-Ռուսաստանի իւղի 1/4 կամ 1/2 մասը ճարպ է, այնու ամենայնիւ մի դնով են ծախվում թիֆլի-սում առաջինի անկանոն և երկրորդի կանոնա-ւոր պատրաստելու պատճառով: Այս տարի մեր իւղը ծախվեց 9 ռ. 50 կ.—10 ռ.: Բայց դժբաղ-դաբար տեղական կաթնային արդիւնաբերութիւ-նը ցարդ տեսակիցն է, իւղը կեղտոտ է, իսկ պանիրը բոլորովին վատ է, այնպէս որ ոչ մի տեղ չէ արտահանվում: Իւղ և պանիր պատրաս-տելու կերպը նահապետական է և այդ պատճա-ռով էլ կաթին մեծ քանակութիւնը կորչում է անարդիւնաւէտ, այն ինչ պանրագործութեան կատարելագործված ձևով և իւղ հարելու (խնո-ցիները) նոր տեսակով, պանիր և իւղը թէ քա-նակութեամբ և թէ որակութեամբ նշանաւորա-պէս կը լաւանան:

Այս բոլորից յետոյ պ. Ֆէօֆորով ասում է որ տեղիս ուսումնարանը այդ արհեստանոցը բա-ցանկելով, ոչ թէ միայն սովորած աշակերտներ կը տայ, այլ նաև այստեղ կը գան և կը տեսնեն շատ զիւղալիք և կը սկսեն այս նոր սխառնով ա-ռաջ մղել իրանց անտեսութիւնը: Իսկ տեղիս հարուստները, որոնք պահում են 400 գլուխ ոչ-խար և 20 կթի կով, կը կրկնապատկեն իւղ թիւը և առանձին գործարաններ բաց կանեն նոյն իսկ մարգագետիններում, ուր արածում է անասունը: Այնուհետեւ պ. Ֆէօֆորով շարունակում է խօսել աշակերտների քանակութեան, կաթ ձեռք բերե-լու, արձակուրդին դրանով պարապելու ժամանա-կի, հաշապահութեան, արհեստանոցի կազմակեր-պութեան, գործիքների և այլ կարեւոր բաների մասին: Իր կազմած նախագիծ վերջում պ. Ֆէօֆո-րով յոյս է յայտնում արհեստանոցի աշդու-թեան համար և որպէս օրինակ վերցնում է բա-րոն Կուչնեւսի արհեստանոցը:

Մենք էլ, մեր կողմից ի սրտէ ցանկանում ենք պ. Ֆէօֆորովին տոկոսութիւն սկսած գործին ըն-թացք և կատարումն տալու:

Ս. Բ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հայր Ղևոնդ Ալիշանի նոր աշխատութեան վե-րաբերմամբ այս օրերս Վենեցիայի Միսիթարեան Միաբանութեան հրատարակած մի չղջաբերական

գրութեան մէջ կարդում ենք հետեւալը: «Բաւա-կան ժամանակէ ի վեր յընթացս տպագրութեան կը գտնուի հ. Ղևոնդ Ալիշան վարդապետին ծանրակշիւ երկաթեթիւնն մեր «Այրաբատ Աշխարհի» վրայ, որ կը հրատարակուի մի և նոյն զիւրքով և առաւելագոյն ճոխութեամբ պատկե-րաց, գունաւոր մանրանկարութեամբ, աշխարհացոյց և տեղագրական քարտիսք, զնկագիծ և լուսատիպ նկարութե և այլն, յառաջ քան դամ ինչ հրա-տարակեալն «Սիւռնան»: Նպատակաւ տպագրա-կան մեծագումար ծախուց օգնելու, մեծապէս լուսաւ ենք որ բանասէր և ազդասէր անձինք՝ յօժարամիտ պիտի փութան բաժանորդագրիլ այսպիսի շքեղ հրատարակութեան մը, որ ազդա-յին մատենագրական-պատմական-աշխարհագրա-կան անգին օգտին հետ կը բովանդակէ յինքեան նաև մեծարդոյ հայրենասէր հեղինակին քառաս-նամեայ և աւելի տարիներու անընդհատ ճգանց և ուսմանց երկունքը: Բովանդակ գործն պիտի բաղկանայ մերձաւորապէս 75—80 քառածալ մեծադիր փառաւոր տպագրութե թերթերէ: Բա-ժանորդագրութիւնն կանխիկ վճարմամբ միայն ընդունելի կը լինի: Բաժանորդագրոյն ստացման համար ի Տպագրատանէս անդորրագիր կուղար-կուի առ բաժանորդս: Ով որ բարեհաճի բաժա-նորդ գրուիլ մինչև ցիւրլը Յունիսի 1889 տար-ւոյս, կը վճարէ միայն 50 ֆռանկս: Գումարս 30 թռակնէն վերջը բաժանորդագրութիւն այլ ևս ընդունելի չի լինի: Տպագրութիւնն աւարտելէ յետոյ՝ մնացեալ սակաւաթիւ օրինակներն (եթէ յաւելուն, վասն զի տպագրութեան սահմանեալ օրինակը չեն բազմաթիւ) պիտի վաճառուին իւ-րաքանչիւր 100 ֆռանկաց: Բաժանորդագրու-թեան կեդրոնատեղին է ի Վենեցիայի, Միսիթա-րեան Տպարան, Venise, Imprimerie Arménienne: Վերջոյնեալ բաժանորդագրոց մէջ ամփոփեալ է նաև ճանապարհի ծախքն, զոր Տպագրութիւն իւր վրայ կը ստանանէ:»

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Այստեղ ստացվեց Վենեցիայի Միսիթարեան միաբանութեան կող-մից հ. Ղ. Ալիշանի աշխատասիրած «Այրաբատ աշխարհ» կոչված գրքը՝ բաժանորդագրութեմ: Այդ աշխատութեան վրա տքնել է բազմաշխատ հայ-րը ամբողջ 40 տարի և երևում է, որ դա լինե-լու է իր տեսակի մէջ մի հարստութիւն հայկա-կան գրականութեան համար: Այժմանից իսկ շատերը ցանկանում են ձեռք բերել այդ գիրքը, բայց ափսոս որ Միսիթարեան հայերը թանգ են նշանակել գրքի գինը, այն է 50 ֆրանկ տպագրու-թիւնից առաջ, և 100 ֆր. տպելուց յետոյ: Այդ գինը, կարելի է ասել, անմատչելի են շատերի համար, որոնց թիւում առանձնապէս յիշում ենք Նիւթապէս անապահով հայ ուսուցիչներին: Ի նիկաթի ունենալով, որ «Այրաբատ աշխարհ» գրաբար լեղով պէտք է լինի դրած և ուրեմն անհատականաւ ժողովրդի մեծ մասի համար, նոյնպէս և նրա թանգ գինը, պէտք է կարծել որ դա շատ քչերի համար մատչելի կը լինի: Այն

ինչպէս տիրոջը: Մարդն է կնոջ գլուխը՝ ինչպէս Բրիտոս էլ եկեղեցու գլուխը, և ինքն է մարմնոյն փրկիչը: Բայց ինչպէս եկեղեցին հնազանդ է լինում Բրիտոսին, այնպէս կանայք իրանց մարդկանց ամեն բանի մէջ: Ահա այս են այն պատուիրանները, որոնցից մի մա-զի չափ չեղելը մահացու մեղք է: Յանուն այս պատուիրաններին, որոնց ինքը էլ կարդացել ևս և լաւ գիտեա, և ես միայն կրկնեցի մտաբերելու համար և ոչ թէ նոր բան ասելու, — յանուն այս պատուիրաններին պիտի կատարես մեր խնդ-րածը: Ի հարկէ յայտնի է մեզ ամենքիս որ Պետրոս-բէկը տաք բնաւորութեան տէր մարդ է, այդ գիտենք...

Ախ, ան... մալխա... ի խորին սրտէ բացա-կանչեց Սիմոնը ու լուց, կրկին յառելով աչքերը ասան անկունին: Մօրս ու Սաբէթօի աչքերից ար-տասունքը թափվում էր...

Մրանց վատեալ տրամադրութիւնը թոյլ չը տուէր ինձ խօսել տէր-Մօսէսի հետ, ասել նրան այն, ինչ որ եփ էր գալի այդ բոպէին սրտիս մէջ: Մի բոպէ սրանից առաջ թմրած սիրտս այ-ժմը դարձեալ տալիս ու վրա էր եղել տէրտէրի առաջ բերած այդ աստիճան միակողմանի վկա-յութիւնների պատճառով: Ես էլ չեմ ասում թէ՛ բուն հարցը իմ անձնաւորութեան էր վերաբե-րում, ուրեմն՝ ամեն մի նրա խօսքը սրտիս էր հասնում... Բայց ոչ, իմ աչքի առաջ սրբազան

սկզբունքներ էին ռոտակոխ լինում, և ինձ պա-շարող մտքերը այդ սկզբունքներին էին վերաբե-րում: Սուրբ գրքի խօսքով տէր-Մօսէսը քարո-զում է թէ՛ կանայք պիտի հնազանդին իրանց մարդկանց ամեն բանի մէջ, բայց մի և նոյն ժամանակ լուծում է և ոչինքն չէ խօսում թէ՛ կա-նայք այն ժամանակ էլ պիտի հնազանդեն, երբ մարդիկ արմատախիլ են անում նրանց սրտերից ամենայն սուրբ զգացմունքներ: Այդպիսի պա-րականութիւն չենելով մարդկանց վրա, միթէ սուրբ գիրքը ոչ մի պահանջ չէ դնում մարդ-կանց վրա, ոչինչ չէ սպասում նրանցից: Հա-ւատալի բան է արդեօք, որ սուրբ գիրքը մարդկութեան մի մասը այդքան ստրկացնէ միւս մասին առանց այլ և այլի, առանց մի-որ և է նախաբացատրութեան: Հնազանդութիւնը, որպէս նաև հեղութիւնը, խոնարհութիւնը և այլն, այն, Բրիտոսի վարդապետութեան սխեման հիմունքն են, բայց երբեք չը պիտի հաւատամ, որ ազատ Աստուածը կամեցել է երբեք մեզ՝ կա-նայնց՝ ստրկութիւն ստիճաններ: Հնազանդե-ցեք, ինչպէս եկեղեցին է հնազանդում Բրիտո-սին: Բայց Բրիտոսն եկեղեցու համար Գող-գոթալու ի խաչ հանվեցաւ, փոխադարձ դո-հանդեպ օրինակ ցոյց տալով մեզ, իսկ կանայնց համար ինչ արեցին մարդիկ սկզբից մինչև այսօր: Ոչինչ լաւ բան, և միանգամայն ոչինչ թող լինի կինը պառաւ Ասիայի հարեմներում, թող լինի լուսաւոր ազգերի դահլիճներում, նա միշտ եղել

է տղամարդկանց վաւաչալից հոգածութեան ա-ռարկայ. յեղաշրջել են նրա բնութիւնը, աղաւա-ղել են նրա հոգին, կեղտոտել են նրա սիրտը: Եւ ամենաբողբեղին այն է, որ հնաւոր դարե-րից ի վեր տղամարդկանց շնորհով կնոջ ստա-ցած փուշ դաստիարակութեան պտուղները մին-չև այսօր էլ մասի փաթկմանը են շինում, նրա ստրկութիւնը շարունակելու համար: Զէ որ մինչև այսօր էլ լուծւ ենք, որ կինը թ ոյլ և անկամք արարած է, չէ կարող առանց տղա-մարդի թիկն յենվելու ոտի վրա կանգնել: Եւ այնքան անդամ ասել, կրկնել են, որ կինը ինքն էլ հաւատացել է, որ թոյլ է, անկամք է:

Բայց և այնպէս անողք կեանքը հիւստիափեց-նում է և այդ թոյլ արարածին. այստեղ այնտեղ որ և է որոնք զնվում կոտորտելու հեռագոյն դարերից ժողովաւ ծանր չղջանները, և միակ ուղիղ ճանապարհը, որ հասցնում է կնոջը այդ նպատակին — իր սպորտսը իր սեփական աշխա-տանքի մէջ հայթայթելն է: Հիմարտ երջանիկու-թիւնը այստեղ է գտնում կինը և այս միջոցով միայն կարող է վճիռ ստանալ կանանց հարցը: Գիտեմ, որ կնոջ կոչումը կայանում է լաւ մայր և ընտիր կին լինելու մէջ: Եւ դուք հէնց նոյն իսկ այդ մտքով է ասած թէ՛ «ոչ թէ՛ մարդը կնկան համար է ստեղծված, այլ կինը մարդու համար: Բայց ընտանիքին լաւ մայր լինելու համար, արդեօք հարկաւոր է և ստրուկ լինել, ոտն ու ձեռք կաշկանդած ստրուկ, սիրտն ու հո-

գին աղաւաղած արարած: Ոչ, և հազար անգամ ոչ...

Այս էր անցնում մտքովս տէրտէրի խօսելու ժամանակ, բայց ես լուել էի...

— Ամեն մարդ իր ճակատին դրածը պիտի քաշէ համբերութեամբ, սովորեցնում էր տէր-Մօսէսը, — ծանր էր և Բրիտոսի ուսերի համար, երբ նա իր խաչը Գողգոթա էր բարձրացնում...

— Մայնք ջան, յանկարծ վեր կացաւ տեղից մօլա Սիմոնը և դիմեց ինձ, — էլ ինչ ասեմ, այ, էս գտակը քո ոտի տակն եմ գցում. ես կօխիւր անցիր, ես բարձրացուր տուր ինձ ու ես գնամ Պետր Վասիլեւիչին բերեմ:

— Սալմե, հոգաւ մեռնեմ, անումիդ մեռնեմ, դո՛ւ ընիս այդ մատաղ որդուդ արեւը, թէ սի-րում ես նրան, չէ՛ մի ասա, աղաչում էր մայրս, — էս խաղաղականութիւնը մեր օջախից վեր առ, խալխի առ ու խօսի տակ կը գցիր մեզ, հերիք է ինչ որ քաշել ենք... Եղուց երկնից կը մեծա-նա, հէր կուգենայ ինչ պիտի ասես սբան. էսպէս բան տեսնված չի...

Ի՞նչ երկարացնեմ. կրկին զլիւսի կայացելն Պետր Վասիլեւիչին, ամբողջ տարիներ ևս ապրե-ցի նրա հետ Եւ այս միջոցին երկրորդ գաւառի մայր եղայ...

(Կը շարունակվի)

ինչ թէ տպագրական ծախսի թիվերը հասնում է թէ զրեքերի տարածման համար նպատակայարմար կը լինէր գինը փոքր ինչ պակասեցնել և կամ տպագրելուց յետոյ ամբողջ չը. թանդագ-նելն:

Երեւոյ մէջ գրում են. «Մի երկու օր անձ-րն եկաւ, և ահա քաղաքի փողոցները կրկին ա-նանցնելի դարձան: Քաղաքի հրապարակը, ուր կենտրոնացած է զլիստոյ առևտուրը, և որը տարեկան մօտ 10 հազար եկամուտ է տալիս քաղաքին, այնպիսի ցեխով է ծածկված, որ բա-ռի բուն նշանակութեամբ, անցնել չէ կարելի: Այդ բանը զրուելի է մանաւանդ այն պատճա-ռով, որ մի քանի հարիւր տուրքի արդէն բաւ-կան է այդ հրապարակը ստալայտակ անելու և նոյն իսկ մի ծածկոց չլինելու, որի տակ անձրեկ ժամանակ կարելի լինէր զետեղել բերած սպ-րանքները: Մինչև երբ պէտք է այս ողորմելի քաղաքում ամեն բան անհոգութեան տրվի:»

Երեւոյ Կ. Պօլսի մէջ, գերասան Աղամեանի յօդուհանի առիթով հրատարակվել է մի զրբոյ՝ «Քսան և հինգամեայ բնական գործունէութիւն Պ. Աղամեանի» վերնագրով: Այդ զրբոյի մէջ, ուր զետեղված է և նշանաւոր գերասանի պատ-ուանի զանազան քաղաքներում առած ներկայա-ցումները, առաջ բերելով մի և նոյն ժամանակ-առու մամուլի կարծիքները նրա խաղի և ընդու-նակութիւնները մասին: Գրքովը ծախվում է և թիֆլիսի գրաւաճառանոցներում, գինն է 50 կոպէկ:

Մեզ ուղարկված է Ամերիկայի Նիւ-Եօրկ քա-ղաքում հրատարակվող «Սուրհանդակ» ամսու-նային լրագրի առաջին համարը: Լրագրի նը-պատակն է, ինչպէս յայտնված է այդ համարում, «Ամերիկայի հայ գաղթականութեան մէջ յարա-բերութեան կապ մը բլլայ»: Թէ որքան կարող կը լինի այս նոր լրագրի աշխատի կապ լինել, այդ ապագան ցոյց կը տայ: Միայն առ այժմ չենք կարող չը նկատել, որ հեռու Ամերիկայում հրատարակվող հայերէն թերթերը գոնէ իրանց զոյգութեան իրաւունքը ապացուցանելու համար, պէտք է խմբագրել փոքր ի շատէ բարեխիղճ կերպով, ուսումնասիրելով մի և նոյն ժամանակ այնտեղ գաղթող հայերի դրութիւնը, և աշխա-տելով այդ գաղթականութեան առաջն առնել: Ապա թէ ոչ թեթիւ կերպով սկսելով թերթի հրա-տարակութեան դժուր, հետեանք այն կը լինի, որ մի քանի ամիս զոյգութիւն ունենալուց յետոյ իրանք իրանց կը դադարեն, ինչպէս արդէն դէպ-քեր էլ եղել են: Մեզ ուղարկված «Սուրհանդակ-ը» շատ փոքր դիւրամ է և պիտի հրատարակվի ամիսը մի անգամ միայն. խմբագրութեան հաս-ցէն է. «To The Editor of The Sourhantag, West Hoboken, N. J. U. S. America. բաժա-նորդագինն է 25 սենթ»:

ԲԱԳՈՒՅՑ մեզ գրում են. «Երեք տարի օրա-նից առաջ, զրեթէ օրը ցերեկով մի անյայտ չա-րագործ սպանեց տեղիս ոստիկանապետի օգնա-կանին: Այս օրերս այդ չարագործը ձերբակալ-ված է. ասում են, որ թուրքերից շատ մարդիկ են խառն այդ գործում, ի միջի այլոց ձերբա-կալված է և մի բալխանցի բէկ, որի թելա-դրութեամբ և կատարվել է սպանութիւնը:»

Բարեկենդանի տօները պատճառով թիֆլիսում հասարակական քոյր դուրսնութեան տեղերը բացված են, և ժողովուրդը շտապում է մի քանի օրվայ ուրախութիւններից որքան կարելի է շատ օգտվել: «մեծ-պատի ընթացքում միատեսակ մե-ռելային կեանքի մէջ ընկնելու համար թէ օպե-րային և թէ դրամատիկական թատրոնում օրը եր-կու անգամ են ներկայացումներ լինում: Ներկա-յացումներ են տրվում և արախտական ընկերու-թեան մէջ, իսկ զիմակահանդէսները և պարա-հանդէսները անպակաս են թիֆլիսի համարեա բոլոր կլուբներում: Եւ ամեն տեղ ներկայ է քաղաքի բոլոր դասակարգերից անազին բաղ-մութիւն:

ԲԱԳՈՒՅՑ մեզ գրում են. «Այստեղի քահանա-ները, որոնք զանազան ծիսակատարութիւնների վերաբերմամբ ամեն քայլ պատրաստ են հա-րուստների կամքը կատարել, անհերքելի անհո-գութեամբ են վերաբերվում դէպի չունեցողները,

և աղքատ քաղաքացիներ շատ դոնէ սպասել, մինչև որ այս կամ այն քահանայ բարեհաճէ զալ պատկի, թաղման, մկրտութեան կամ մի այլ խորհուրդ կատարելու: Մեր քահանաները, որոնք բացի այդ տեսակ ծէսեր կատարելուց, ուրիշ բա-նի մէջ ժողովրդին պէտք չեն զալիս, գոնէ այնքան հասկացող լինէին, որ իմանային թէ ա-ղայականութիւնը եկեղեցու մէջ չուր չը պէտք է ունենայ:»

Հինգշաբթի, փետրվարի 16-ին, Վարդանանց նահատակութեան տօնի երեկոյեան, թիֆլիսի ազնականների բանկի թատրոնում հայ դերա-տանական խումբը ներկայացրեց «Վարդանանց պատերազմ» պիէսան: Թատրոնը, ինչպէս միշտ այդ երեկոն, այնպէս լի էր, որ ասեղ գցելու տեղ չը կար: Պիէսայի բովանդակութեան և ար-ժանաւորութեան հետ բնական կողմից ծանօթ է հայ հասարակութիւնը, այնպէս որ չարժէ խօ-սել դրա մասին: Բայց խորհուրդ կը տայինք մեր դերասաններին պիէսայից դէն գցել մի քանի գրաբար կտորներ, որոնք բոլորովին անհսկա-նալի են հասարակութեանը: Ներկայացումից յե-տոյ պ. Բաշինջաղեան դրեց կենդանի պատկեր-ներ:

Փետրվարի 16-ին Վանքի մայր-եկեղեցում կա-տարվեց կոմս Լօրիս-Մէլիքովի յիշատակին հաղե-հանգիստ և օրհնվեց հանգուցեալի գերեզմանը: Ներկայ էր մեծ բազմութիւն, որի թուով նկատե-լի էին և մի քանի բարձրաստիճան անձինք: Գե-րեզմանը ծածկված էր բազմաթիւ պսակներով: Արիւստակէս եպիսկոպոսը ներկայ էր հոգեհանգս-տին:

Ուրբաթ, փետրվարի 17-ին, թիֆլիսի օրիոր-դաց զինապետի դահլիճում կայացաւ «Վարժու-հիների փոխադրած օգնութեան ընկերութեան» տարեկան ընդհանուր ժողովը: Ժողովի ժամա-նակ մեծ վիճաբանութիւններ յարուցեց այն հար-ցը թէ արդե՞ր ընկերութեան վարչութիւնը իրա-ւունք ունի յանձնարարել ուսուցչուհիներին դա-սեր տալու ցանկացողներին մօտ: Ընկերութիւնը ոչ մի որոշ եղադակացութեան չեկաւ. վճարեց առ այժմ սպասել և աւելի մշակել հարցը: Հաստատվեց ան-ցեալ տարվայ հաշիւը, որից երևում է, որ ընկերու-թիւնը ունեցել է 3 պատուաւոր անդամ, 38 օժանդա-կիչ անդամներ և 138 իսկական անդամներ: Ըն-կերութիւնը մուտք է ունեցել 2,826 ռ. 35 կ., իսկ ծախսել է 2,076 ռ. 22 կ.: Տարվայ միջոցին ընկերութիւնը օգնութիւն է հասցրել իր անդամ-ներին՝ կամ միանուգը օժանդակութեամբ, կամ փոխ տարով, դասախօսութիւններ է սարքել ան-դամներին համար, կազմել է մանկական հանդէս-ներ և այլն: Հաստատվեց 1889 թվի նախահաշի-ւը, որը ընդհանրապէս չէ զանադանում անցեալ տարվայ հաշիւից, միայն վճարեց ընթերցարանի և ընկերութեան գրասենեակի համար առանձին բնակարան ունենալ: Այնուհետեւ կատարեցին ըն-կերութեան պաշտօնական անձերի ընտրութիւնը:

«Հիւսիսային գործակալութիւնը» հաղորդում է մեզ հետեւեալ հետապիւրը: Հրատարակված է պե-տական խորհրդի հետեւեալ կարգադրութիւնը. 1) նախագահել ուսումնարանական խորհուրդներում և ընտրվել նոյն խորհրդների անդամները պաշտօնի համար իրաւունք ունեն միմյանց քրիստոնեական-րը: 2) Եթէ ազնականութեան նահանգական կամ գաւառական պարագլուխը քրիստոնեայ չէ, ու-սումնական խորհուրդում պէտք է նախագահ նրա փոխանորդը, իսկ եթէ սա էլ քրիստոնեայ չէ, այն ժամանակ նախագահութեան պաշտօնը չէ, տան է յանձն առնել խորհրդի աւագ անդամը: 3) Ազնականութեան, որոնք հրապարակապէս քա-րոյում են ուղղափառներին իրանց սխալ վար-դապետութիւնը, ջանալով դարձնել ուղղափառ-ներին դէպի հերետիկոսութիւն, ենթարկվում են պատժական օրհնադրութեան 189-րդ յօդուածին: 4) Ուղղափառ կրօնի և եկեղեցու դէմ գործած յանցանքների վերաբերմամբ դատաստանական գործերի ընթացքում, նոյնպէս և երկուստեանը պէտք է լինեն ուղղափառ (օւսուցչական) կրօնի պատ-կանողները, իսկ աղաքաւանները, որոնք թէ նա-հանգական և թէ չըջանային պրօկուրորի պաշ-տօն են վարում, կամ նահանգական դատարան-ների անդամներ են և քարտուղարներ,—այդպի-սինքն չեն մասնակցում այնպիսի գործերի ըն-նութեան ու դատավարութեան, որոնք վերաբե-

րում են ուղղափառ կրօնի և եկեղեցական հաստատութիւնների դէմ գործած յանցանքներին:

Այս օրվայ փոստը մեզ հայոց լրագրիները ա-հազին քանակութիւն բերեց աշխարհի զանազան կողմերից, ոչ թէ միայն Կ. Պօլսից, Վ. Ենիքիայից, Վ. Ենիքիայից, այլ և Եւրոպայի ուրիշ քաղաքներից, և նոյն իսկ հեռու Ամերիկայից և Աֆրիկայից: Նայելով զանազան կողմերից ստացվող այդ բազ-մատեսակ և բազմազոյն հրատարակութիւններին, հեշտ է եղադակացնել թէ աշխարհի որ անկիւնից մինչև որ անկիւնն է սփռված հայ ժողովուրդը՝ տեղափոխելով նոյն իսկ իր մտաւոր գործունե-ութիւնը մայր հողից դէպի Ամերիկա, Աֆրիկա և ուրիշ հեռու երկրներ... Եւ առաջին հայեաց-քից թվում է թէ ուրեմն ինչ մեծ ոյժ է ներկա-յացում զանազան տեղերում գոյութիւն ունեցող հայոց մամուլը և գրականութիւնը: Բայց... տա-րաբազաբար շատ անշնան ոյժ, շատ նուազ եւտեղ և շատ ողորմելի ճգնաժամներ են պարու-նակվում այդ բազմաթիւ հրատարակութիւնների մէջ...

Ստացանք Երիւստիսի Ալեքսանդրի քաղաքում հրատարակվող «Ներքու» շաբաթականին թիւ առա-ջին համարները: Լրագրի սովորական դիւրմը հը-րատարակվող այդ շաբաթականին,—որի ճակա-տը զարդարած է եղիպտական կենանքից վերջած-նակով, եղիպտական բուրբուր, մոմիաների և քարվանդների պատկերներով,—որքան նկատեցինք առաջին մի քանի համարներից, կարող է աջո-ղութիւն ունենալ, եթէ խմբագրութիւնը մի փոքր էլ աւելացնի իր աշխատանքը և ջանքերը: Հա-մարները կազմված են բաւական բազմակողմանի կերպով, թէև նիւթերի մէջ առանձին ընտրու-թիւն չէ նկատվում: Մեզ վրա լաւ տպաւորու-թիւն թողեց «Ներքու» ընթացողական, թէև թղթ, սղջութիւնը և այն, որ նա ձգտում է ու-սումնասիրել հայ ժողովրդի կեանքը, հեռու պա-նելով իրան եւրօպական լրագրութեան անդոյն պատճէնը լինելուց: Այդ ուղղութեան մէջ նոր շաբաթականներին աջողութիւն ենք ցանկանում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐԿԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Երեւոյ Կ. Պօլսի «Արեւը» լրագրին գրում են հետեւեալը. «Սղեւը» 3,500 տունէ բաղկացեալ կառավարչանիստ կարեւոր քաղաք մ'է, որոյ 600 տունը հայ են, մնացեալը թուրք, ասորի, բաղ-դէացի և բողոքական: Սղեւի առաջնորդութեան ներքեւ են ոչ միայն բուն Սղեւից, այլ և Պօ-տանի (Տփլիզ), Սասնոյ մէջ մասին, Արշնայ, Ուրտանի (Գեղաւան), Շիրաւանի, Հասան քէֆի, Այալեքի, Սպալիքի և Ապարանից հալը, որոց ընդ ամենը կը լինի ըստ Սղեւի առաջնորդա-րանի արձանագրութեանց 10,000 տուն: Այս ամեն հայերն ալ կորսնցուցած են իրենց մայրենի լեզուն և կը խօսին արաբերէն, քրդերէն և մէկ կրկու տեղեր ալ անհասկնալի աղաւաղեալ հայե-րէն մը. իրենց միւլթարական բան մը չունին բացի 6 վարժարաններէ, որոնք կը գտնուին ի Սղեւի, ի Ռուսան, ի Պաքեն, ի Հազլոյ և ի Տէհ ընդ հովանաւորութեամբ Հայոց Միացեալ բարեբար ընկերութեանց: Զուին կառավարու-թեան առջև յարմար ներկայացուցիչներ, եկեղե-ցւոյ մէջ քարոզիչներ, ցանկերն յայտնող հրա-պարակագիրներ, միւլթարի բարեկիրթ քահանա-ներ և այլն:»

Ուսումնական խորհուրդը իր վերջին նիստերից մէկում նկատողութեան առաւ տիտղոսների յանձ-նաժողովի տեղեկագիրը, որով կը յայտարարե-թէ կատարած է տիտղոսներու բաժանումն, և ու-րոյնց հրատարակութեան տալ այն Ապա նկա-տողութեան առաւ Տիւրքի թարգմանութեան ընդ մասնաւորի անդամ Մոստիճեան էֆէնդիի տեղեկագիրը և նկատելով որ նոյն մասնաւորի անդամ Տատան Ահմադ պէյ հրաժարված է այդ պաշտօնից, որոյնց Եւսուպեան Տիւրքն է-ֆէնդիի տեղեկագիրը ևս ստանալուց յետոյ հարկ եղածը անօրինել: Վերջապէս որոյնց պատ-րիարքական չըջաբերականում հաղորդել ի գործա-ղութիւն նրանց, որոնց անկ է, վարժարանների բարեկարգութեան հրահանգի վրա եղած յաւե-րածը, որը խառն ժողովը ընդունել է և վաւե-րացրել: Ինչպէս կը յիշուի, այն յաւելումներ հա-մաձայն վարժարանների տարեկան ընթացքին:

ըր պիտի կատարվեն մեծ պատի՛ մէջ, վարժարան-ների տարեկանը պիտի սկսի մայիսի մէկից, վարժարանները ներքին տնօրէններ պիտի ունե-նան, և այլն:

Պատրիարքարանի շինութեան վերաբերմամբ Կ. Պօլսի լրագրիներում կարդում ենք հետեւեալը. «Պատրիարքարանի շինութեան յանձնաժողովը երէկ ի նիստ գումարեցաւ ի խորհրդարան Բե-րայի ընդ նախագահութեամբ Պատրիարք Հօր և ի ներկայութեան յանձնաժողովի անդամ Ենա-դոյն մասին: Ինչպէս կը յիշուի, յանձնաժողովը իւր նախորդ նստին մէջ խնդրած էր իւր անդա-մակից Յովսէփէն էֆէնդի Ազնաւորեանէ պատ-րաստել Պատրիարքարանի այժմեան շէնքին յա-տակաձնն ըստ այնմ գաղափար մը կազմելու և որոշում տալու համար: Արդ պատրաստած լինե-լով այդ յատակաձիւր՝ յանձնաժողովը յետ խորհը-ղակցութեան որոշեց գործի ձեռնարկել ընդ փոյթ: Կըսուի թէ ի նորոյ կառուցանելի շէնքին համար 15,000 ոսկւոյ չափ ծախք մը հաշուած է:»

Մեր լրագրի անցեալ համարներից մէկում հաղորդեցինք, որ Երեւոյի առաջնորդ Արիստա-կէս եպիսկոպոսը հրաժարվում է իր պաշտօնից: Հրաժարվող եպիսկոպոսը, ինչպէս երևում է, այդ հրաժարականը պատճառաբանում է իր հա-տոյթի քչութեամբ: Բայց ահա թէ ինչ են գրում այդ մասին Երեւոյից «Արեւը» լրագրին. «Սղե-րազանք իր հրաժարագրի պատճառաբանութիւնը կը վերագրէ առաջնորդական հատոյթից անբաւ-կանութեան, և սակայն քանի գաւառի առաջ-նորդական հատոյթը կրնան համապատասխանել կարեւոր առաջնորդական հատոյթին, երբ առաջ-նորդ մը ութ ամսեայ չըջանի մէջ մօտ երեք հարիւր ոսկւոյ եկամուտ կը ստանայ, ուրեմն ինչ-պէս կարելի է այդքան հատոյթ անբաւական հա-մարիւր հանդէպ ինչպիսիական ծախուց և հանդէպ լքման դպրոցաց և այլն: Արիստակէս սրբա-ղան ըստ իւր խոստանութեան, իրաւունք ունի անբաւական համարիլ այդքան եկամուտ, որովհետեւ երբ այն ինչ դարբին յետեւել կամ արհեստագոր-ծի զաւակն ամուսնութեան հրամանագրի համար, հակառակ իր պահանջած հինգ արծաթի, երկու կամ երեք արծաթ մէճիւտ կը վճարէ (պակասին տեղ թէև սրբազանը անձը կը կարգայ)՝ բնա-կան է թէ այնպէս պատճառաբանելու էր և ոչ այլ կերպ:»

ԽՏԱՆԱՅԻ ԲԱՆԻՈՐԴՆԵՐԻ ԾԱՌՈՒՄԸ ԵՒ ԿՈՒՍՊԻ

Հինաւուրց Հօսի փողոցներում, որոնք դարե-րից ի վեր ականատես են եղել քաղաքական և կրօնական ամեն տեսակ ցոյցերի, այս օրերս տե-ղի ունեցաւ մի մեծ շարժում—բանաւորների շար-ժում: Կաթողիկ աշխարհի օրբաւայրի բնակիչնե-րը համարեա թէ չէին սպասում, որ Հօսիում բանաւորական շարժումը այնպիսի բնաւորութիւն կարող է ստանալ, ինչ բնաւորութիւն որ նա ու-նեցել է մինչև այժմ թէ Բեղիկայում, թէ Ֆրանս-սիայում և թէ Լոնդոնում: Միայն խաղաղի անտեսական կենսաբան հետեւները, որոնք վա-րդուց ի վեր կուտում են այժմեան միջնադարից են միջնադարից անհաղաք Կրիսպիլի դէմ, գոչալովում էին, որ անտեսական և ֆինանսական այժմեան պայմանները կարող են անախտօք խառնակու-թիւններ առաջ բերել:

Մաքսիմի շատանքը, հարկերի մեծացնելը, արդիւնաբերութեան նուազելը, պատերազմական և զինուորական հազարներ, չը տեսնված ծախսերը մի քանի տարվա ընթացքում այնպիսի ճգնա-ժամ պատրաստեցին խաղաղութեան, որ փոքր մի-ջոցում ամբողջ երկրում կաղմակերպվեց անգործ, անիւղ և անհաց մարդկանց մի անազին բաղ-մութիւն, որը խաղաղի բոլոր կողմերից Հօսի թափվելով՝ մի քանի օրվայ ընթացքում առաջ բերեց բանաւորական կատաղի շարժում, և սկսեց կուռել, կոտորել ու ջարդել... Մի քանի օր չա-րունակ Հօսի փողոցները դարձան իրենց անտեսա-նէին ներկայացնում բանաւորների շարժման շնոր-հով: Եւ բանը այնտեղ հասաւ, որ կառավարու-թիւնը այդ շարժումը հանդարտեցնելու համար դուրս բերեց անազին զօրք: Բանաւորների և զօրքի մէջ, ի հարկէ, ընդհարումներ տեղի ունեցան...

Բայց ինչո՞ւր նրանումն է, որ զօրքի միջոցով չէ կարելի հանդարտեցնել՝ այն շարժումը, որը բղկում է երկրի տնտեսական գործիւնից, մի գործիւն, որը մեծ մասամբ հետեւեալ է կառա-վարութեան գործունէութեան և այն ուղղութեան որով ընթանում է Կրիսպիլի միջնադարից:

